ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳ

1. Էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագիր կնքել ցանկացող սպառողները (որոնք հանդիսանում են ՀԷՑ ՓԲԸ սպառողներ, սակայն ցանկանում են դուրս գալ էլեկրտաէներգիայի ազատ շուկա և ներառվել մատակարարի խմբում որպես սպառող) պետք է իրենց մտադրության մասին գրավոր կամ բանավոր հայտնեն «Էներջի Սփփլայ» ՍՊԸ–ին՝ ներկայացնելով իրենց ընկերության տեխնիկական տվյալները՝ սպառողի անվանումը, լարման պատկանելիությունը, սպառման տարեկան մոտավոր քանակությունը, սպառման սեզոնայնությունը, մատակարարման ժամանակահատվածը, հաշվիչի տեսակը, ՀԷՑ ՓԲԸ–ի հետ կնքված պայմանագիրը և կոնտակտային տվյալները: Սպառողը պարտավոր է ներկայացնել նաև ֆոտովոլտային կայան ունենալու փաստի և/կամ տեղադրելու մտադրության մասին:
2. Սպառողը տեղեկացվում է «ՀԷՑ» ՓԲԸ–ի հետ կնքված մատակարարման պայմանագրից հրաժարվելու հետևանքների, այդ թվում նաև՝ արևային ՖՎ կայանի հաշվառման կարգի փոփոխության մասին:
3. Նշված տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում «Էներջի Սփփլայ» ՍՊԸ–ի համապատասխան աշխատակիցը կազմում և սպառողին է ներկայացնում գնային առաջարկ:
4. Առաջարկն ընդունելու դեպքում սպառողը իր սպառման տեխնիկական հարաչափերը բերում է շուկայի կանոններով նախատեսված ընդունելի վիճակի (օրինակ՝ իր կամ ենթասպառողների հաշվիչների կարդացվելիության ապահոում):
5. Այնուհետև սպառողի հետ կնքվում է էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագիր և «Էներջի Սփփլայ» ՍՊԸ–ի աշխատակցի օգնությամբ կազմվում են համապատասխան փաստաթղթեր՝ շուկայի օպերատորին ներկայացնելու համար:
6. Համապատասխան փաստաթղթերը ներկայացնելու օրվանից 6 աշխատանքային օրվա ընթացքում սպառողը ներառվում է «Էներջի Սփփլայ» ՍՊԸ–ի մատակարարի խմբում որպես սպառող և մեկնարկում է էլեկտրաէներգիայի մատակարարումը:
7. Էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագրի գործողության ընթացքում վճարումների ուշացման կամ չկատարման դեպքում դադարեցվում

է «Էներջի Սփփլայ» ՍՊԸ–ի կողմից էլեկտրական էներգիայի մատակարարումը:

8. Էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագրի գործողության ընթացքում առաջացած հարցերի/բողոքների կամ տեխնիկական հարաչափերի փոփոխության դեպքում սպառողը դիմում է «Էներջի Սփփլայ» ՍՊԸ–ին՝ գրավոր նամակ ուղարկելով վերջինիս էլ. փոստի հասցեին: Անհապաղ հարցերի դեպքում սպառողը կարող է կապ հաստատել աշխատանքային ժամերին՝ 10:00–18-00 զանգահարելով կայքում նշված հեռախոսահամարին կամ անհատական սպասարկողի հետ՝ վերջինիս կողմից տրամադրված հեռախոսահամարով:
9. Բողոքների մասով «Էներջի Սփփլայ» ՍՊԸ–ի պատասխանը սպառողին ներկայացվում է 5 աշխատանքային օրվա ընթացքում: